

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) հեռակա ուսուցման բաժինը ինստիտուտի հեռակա ուսուցման աշխատանքները պլանավորող և կազմակերպող կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2. Հեռակա ուսուցման բաժինը (այսուհետ՝ բաժին) իրականացնում է հեռակա ուսուցման ձևով կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով: Հեռակա ուսուցման համակարգում կիրառվում են ուսուցման բոլոր այն ձևերն ու եղանակները, որոնք սահմանված են ցերեկային ուսուցման համակարգում:

1.3. Հեռակա ուսուցման համակարգում ուսումնական տարին, ըստ մասնագիտությունների, որոշվում է հեռակա ուսուցման ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի կազմակերպման գրաֆիկներով, որոնցում հաշվի է առնվում ուսանողներին ուսումնական պարապմունքներին հրավիրման, ուսումնական պարապմունքների տևողության, ինքնուրույն աշխատանքների, քննաշրջանների ու ակադեմիական պարտքերի մարման ժամկետների առանձնահատկությունները:

1.4 Բաժինը ենթարկվում է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին և իր գործունեության համար հաշվետու է ինստիտուտի գիտական խորհրդին:

**2.ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

2.1. Բաժնի նպատակն է՝

- 1) խթանել աշխատող քաղաքացիների կրթություն ստանալու գործընթացը,
- 2) ստեղծել պայմաններ հեռակա ուսուցման համակարգի լիարժեք գործունեության համար:

2.2. Բաժնի խնդիրներն են՝

- 1) հեռակա ուսուցման համակարգում ուսումնական տարին, ըստ մասնագիտությունների, որոշել հեռակա ուսուցման ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի կազմակերպման գրաֆիկներով, հաշվի է առնելով ուսանողներին ուսումնական պարապմունքներին հրավիրման, ուսումնական պարապմունքների տևողության, ինքնուրույն աշխատանքների, քննաշրջանների ու ակադեմիական պարտքերի մարման ժամկետների առանձնահատկությունները:
- 2) Յուրաքանչյուր կիսամյակից հետո հեռակայող բոլոր ուսանողներին ապահովել հաջորդ կիսամյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերով՝ ուսումնական ձեռնարկներով, դասախոսությունների տեքստերով, ինքնուրույն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներով, տեսալսողական, էլեկտրոնային նյութերով և այլ անհրաժեշտ փաստաթղթերով:

## **2. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

2.1. Բաժնի կազմը բաղկացած է պետից և գործավարից:

2.2. Ուսումնական գործընթացը ղեկավարում է բաժնի պետը, որին աշխատանքի ընդունում և ազատում է ինստիտուտի ռեկտորը: Բաժնի մնացած աշխատողներին աշխատանքի է ընդունում ռեկտորը՝ պետի ներկայացմամբ և ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի համաձայնությամբ: Բաժնի պետը ենթարկվում է ռեկտորին, իսկ անմիջականորեն՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

2.3. Բաժնի պետը՝

պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը, համաձայն Ինստիտուտի և սույն կանոնադրության, մասնակցում ռեկտորատի և գիտական խորհրդի աշխատանքներին:

Ինստիտուտի ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով:

ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ բաժնի համագործակցությունը:

2.4. Գործավարի գործառույթները՝

- 1) կատարում է պետի հանձնարարությունները

- 2) հրահանգավորում է նոր ընդունված ուսանողներին ինստիտուտում ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքների, ուսումնամեթոդական և կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ,
- 3) մասնակցում է ուսումնական գործընթացի կազմակերպման գրաֆիկների կազմման աշխատանքներին,
- 4) պետի հետ համատեղ կատարում է ուսումնական պարապմունքների նախապատրաստման և անցկացման աշխատանքները,
- 5) կազմում է ստուգարքների, կուրսային նախագծերի (աշխատանքների) և քննությունների տեղեկագրերը:
- 6) կատարում է դրանց արդյունքների հաշվառումը, ներկայացնում է ուսանողների առաջադիմության վերաբերյալ ամփոփիչ տվյալներ,
- 7) կազմում է կարգադրությունների և հրամանների նախագծերը,
- 8) լրացնում է տեղեկանքները,
- 9) պատրաստում է ուսանողների պետական քննությունների և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության համար անհրաժեշտ փաստաթղթերը, դրանք հանձնում է պետական քննական հանձնաժողովին:

### **3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

3.1. Բաժնում ուսումնական գործընթացը կազմակերպվում է կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից 2007թվականի հունվարի 27-ին հաստատված „Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգին,, և 2013թվականի հունիսի 28-ին հաստատված „Ուսանողների գիտելիքների գնահատման կարգին,, ինչպես նաև ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին համապատասխան:

3.2. Բաժնում ուսուցումը կարող է կազմակերպվել բակալավրի կրթական ծրագրով հեռակա ձևով՝ միայն վճարովի հիմունքներով:

3.3. Ուսուցման տևողությունը հինգ տարի է: Ուսումնական տարվա կիսամյակի տևողությունը վեց շաբաթ է:

3.4. Ուսումնական գործընթացը հետևյալն է՝

- 1) Ուսումնական յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում անցկացվում են թե՛ դասախոսություններ, թե՛ գործնական, լաբորատոր, սեմինար պարապմունքներ:

- 2) Ստուգվում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարևորվում են տեսական և գործնական իմացության համակարգումը, ընդլայնումը և խորացումը:
- 3) Ուսանողներին տրվում են մեթոդական ցուցումներ և խորհուրդներ՝ միջկիսամյակային ժամանակահատվածում ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու համար:
- 4) Հեռակայող ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնական մասը գրավոր (ստուգողական) աշխատանքի կատարումն է: Գրավոր աշխատանքները նախատեսվում են յուրաքանչյուր կիսամյակի համար:
- 5) Առարկայական ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում նաև ուսանողների կողմից ներկայացված թեմաները:
- 6) Ուսանողները ուսումնառության ընթացքում անցնում են 4-րդ կուրսում՝ մանկավարժաման փորձառություն, իսկ 5-րդ կուրսում մարզչական կամ մասնագիտական փորձառություն:

#### **4.ԲԱԺՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ**

4.1. Բաժնի սովորողը բարձրագույն և հետբուհական կրթության սուբյեկտ է: Սովորողներ են համարվում բուհի ուսուցման կրթական ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ռեկտորի կողմից հրամանագրված անձինք:

4.2. Ինստիտուտի սովորողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների եւ պահանջունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը եւ ուսուցման ձեւը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

4.3.Սովորողն իրավունք ունի՝

- 1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) եւ ամբիոնը.

- 2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.
- 3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.
- 4) մասնակցելու ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.
- 5) անվճար օգտվելու ինստիտուտի գրադարանից, մարզասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական եւ այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին եւ սիմպոզիումներին.
- 6) բողոքարկելու ինստիտուտի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաեւ ուսանողական վարկ.
- 9) ծանոթանալու ինստիտուտի կանոնադրությանը եւ նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր ինստիտուտի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.
- 10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչեւ մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.
- 11) ուսուցման առկա ձեւով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տետղությամբ.
- 12) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

13) ուսման բարձր առաջադիմության եւ գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական եւ (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

4.4. Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

4.5 Ինստիտուտի սովորողը պարտավոր է կատարել ինստիտուտի կանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները, որոնց խախտման դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

4.6 Ինստիտուտի ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում եւ ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է կանոնադրությամբ:

## **5. ԲԱԺՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

5.1 Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

## **6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

6.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: